

ՏՆՕՐԿԵ-ԽՄՈՒԿԱԳՐԱՊԵՏ

7. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ցուրեկան	500	դր.
Վ. կցամանայ	250	»
Երևանայ	150	»
Արտատպանք տրվ.	70	»

Բաժանորդագրութիւն կ'ոկուի ամիս անոյ 1 իմ և 15

100 ՓԱՐԱ



Fondateur
M. MAMOURIAN
Directeur-Rédacteur en chef,
H. MAMOURIAN
Arévelian Mamoul,
JOURNAL ARMÉNIEN
QUOTIDIEN

100 ՓԱՐԱ

Օրաթերթ ազգային եւ ֆաղափական

ԱՆՁՈՐ. ՈԳՈՐՈՒՄՆԵՐ

ԼՍՅԵԼԻՍԵ ՄԵՋ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

(Մեր մասնաւոր քրոսակցին)
Բաժն. 7 Ապրիլ 1920

Ժողովուրդներն առաջնորդելու պաշտօն ստանձնող հիմնադրութիւններն ու անհատներն, աւելորդ է ըսել, թէ ծանր պարտականութեան մը կ'ընդունին։ Մակայն երբ ուղիղ հայեացքներ, որոշ նկատումներ, սուղ սկզբունքներ, պայծառ ուղղութիւններ, մաքուր բարոյական և անաղարտ անցիտ մը չունին, չեն յաջողիր իրենց առաջնորդի փափակի դերը կատարելու։ Անոնց բոլոր թելադրութիւնները, պարզած գաղափարները, կ'չեզոքանան, կ'անկամայնքով կ'զրկուեն և չեն կրնար երբէք համոզիչ հանգամանք մը ունենալ ամբողջին համար։ Ահա այս պատճառաւ շատ անգամ ճշմարիտ տաղանդներ, անվիճելի կարողութիւններ գրեթէ կ'կորսուին ու շատ անգամ կ'արհամարհուին, որովհետեւ անոնք ամէն տեսակ ձևափոխութիւններու, ամէն տեսակ այլափոխութիւններու մէջ ձուլուելու ճկունութիւն մը ցոյց տուած են, վրայ տալով իրենց իսկական արժանիքը։

Գոյութեան կամ հացի կոնքը, շապիկ փոխելու նման, սկզբունք փոխելու դրապաւածառ մը չէ կարելի նկատել Ժողովուրդներն առաջնորդելու պաշտօնին նուիրուողներու համար։ Այդ պաշտօնն այլևս կ'կորսնցնէ իր նուիրականութիւնն և կ'զաւնայ վարձկան Այլևս կ'զաղորի միտքը իր անկախ ու անկաշկանդ գործունէութիւնէն ու կ'զաւնայ սպասարկու մը՝ միջակութիւններէ եղած թելադրանքներու, անոնցմէ գծուած ուղղութիւններու և իրաց բնական ընթացքով կ'ոչոյանայ հակասութիւններու քառա մը։

Ուղիղ գատողութեան բնազդը կ'ըջանայ, մտքի պայծառատեսութիւնը կը խամբի, եթէ տաղանդ մը գոյութիւն ունէր՝ կ'անշքանայ և կ'որսուելու կ'զատապարտուի։

Նմանօրինակ երևոյթներու ստեղծակցական եղած են ժողովուրդներն, նմանօրինակ այլասերումներու հանդիսատես՝ ամբողջները։

Օրուան հրատապ հարցերու և խնդիրներու մասին՝ չգեղեցիկ բառերով ու նախադասութիւններով համեմուած ու մեծարուած թելադրութիւններ, երբէք չեն կարող սկզբունքի տէր անհատներու վրայ որ և է ամենազոյն սկզբունքութիւն մը ընել, որովհետեւ այսօրուան իրենց մեծարուածներուն ճիշտ ու ճիշտ հակառակ սկզբունքներ տնցեալին մէջ արդէն միեւնոյն գրական ճոխութեամբ իրենց մեծարուած ըլլալուն կ'անդրադառնան անմիջապէս։

Եւ բնական բերումով մը՝ ոչ միայն կ'փլէի անցեալն այլև ներկան, ոչ միայն անարժէք կ'զաւնայ երէկինը, այլև այսօրինը և անա տգեղ մերկութեան մը առջև կ'գտնէ ինքզինք հանրութիւնը և թիրախաւորութեան սկիզբով ժըպիտով մը կ'ըջարուակէ իր ուզին։

Բնաշղջում կ'ընդունինք։ Աշխարհ արդէն բնաշղջումի օրէնքին ենթակայ, մարդիկ չեն կարող անորմէ խուսափիլ և տարիներու ընթացքին, ստեղծուած նոր պայմաններու առջև տեղի չտալ ու չընդգրկել նոր սկզբունքներ, աւելի թարմ ու առողջ հայեացքներ։

Մակայն ներքին չէ բնաւ համոզումներէ ու նուիրումներէ հրաժեշտ առնել անպատասխանատու անփութութեամբ մը, որովհետեւ այդ տեսակ պարագայի մը առջև վտանգալուր հանգամանք մը կ'ստեղծուի և երևան կ'ենէն դատապարտելի երկուստեւ մը։

Ողձի որքան հանդարտութիւն, հոգիի որքան թեթևութիւն ունենալու է, նմանօրինակ պարագաներու մէջ, աւելորդ է բացատրել։ Ողձի խոսքերու բռնի առջև՝ անպատասխանատուութեան մը մարմնացումը դառնալ, մոռնալ ծանրաբռնեալ անցեալ մը, սկզբունքի մը յաղթանակին պայքարն մղել տարիներ, զոհեր ունենալ խղճի վրայ, յանձնարարութիւններ ստանձնած ըլլալ և յանկարծ անարդարանալի լըլի ֆոֆ մը ընել, սովորական մահկանացուներու չէ տրուած։

Նմանօրինակ հանգամանքներով օժտուած առաջնորդներ, բնականաբար եթէ ոչ վիստակար, անազոյցի կ'զաւնան և իր ուղղութիւնը բնազոյն առաջնորդուած ժողովուրդ մը չկրնար մարտիլ թելադրանքներու և ճնշումներու ենթարկուած այսօրինայ գունդափափ առաջնորդներու պարզած ու քարզած վարդապետութիւնները։

Սքողուած, այլափոխուած, իրերամերժ սկզբունքներով, հեկեկ պարտականութիւն մը կատարելու մտաւեհուած են մարտիլուած ու խորագանուած առաջնորդութիւններ՝ գտապարտուած են մեռել տալու դառնալու։ Անոնք չեն կրնար ժողովուրդն լուսաւորել և երբէք չեն ծառայիր առողջ ու արդարական թող ուղղութեան մը մէջ գնել գայն։

Ժողովուրդն իր վստահութիւնն կորսնցնելէ յետոյ, շատ դժուար է անոր խախտած հատուկ վերստին գտնել։ Ինչպէս որ և իրադարձութիւններու բերումով շատ բնական հարցում մը ինքնաբերաբար պիտի ներկայանայ անոր մտքին առջև։

«Այս գունդափափ առաջնորդներու կողմէ մեզի հրամցուածներուն երէկուածն թէ այսօրուաններն են ճշմարիտներն ու ընտրելիները»։

Եւ ահա ինքնին կ'փլէի ամբողջ անցեալի մը և ներկայի մը մէջ կատուցանել փափաքուած չէնքը, որու փլատակներուն տակ վաղ թէ անազան նախադասուած են կորսուելու անսկզբունք առաքեալները։

«Ճակատամարտ» իր ուրբաթ օրուան թիւին մէջ ստացած ստոյգ տեղեկութեանց վրայ յինդով կ'հաղորդէ, որ վերջապէս Պողոս Նուպար նշանակուած է ներկայացուցիչ տարրաշահան Լոյսաստանի պատուիրակութեան և թէ Պ. Ահարոնեան կ'մնայ իբրև օգնական և թերևս Բ. Նախագահ այդ միեւնոյն պատուիրակութեան։

Գոհունակութիւն պատճառով լուր մըն է, որու առջև ամեն հայ բնականաբար երկար շունչ մը պիտի առնէ։ Այս անուանումով պիտի դադրին կ'յուսամ այն լրբուկ ու զուելի պայքարներն, որոնք անընդհատ կ'մղուին ամերիկահայ մամուլին մէջ և որոնց արձագանքն ըլլալու չեն դեղեւիր հեռուար անկիւններու մէջ, նոյն լուր մտրուումով ու խոտնուածքով օժտուած թերթեր։

Վերջապէս՝ Հ. Հ. կառավարութիւնը զգաց, ըմբռնեց, կուտեց թէ՛ եւրոպական դիւանագիտութեան առջև Պողոս Նուպարէ զատ անձ մը չունի խոտնուածքով օժտուած թերթեր։

Կեանքի փարագայման սղութիւնը Ֆրանսայի մէջ պատճառ եղաւ որ, ընկերավարականները, ընտրական պայքարի իրենց պատմական պարտութեանէն վերջ, կրկին վերսկսին եռանդուն գործունէութեան մը։ Քաջալերուած թիւ մըն ալ գերմանական յղափոխութեան, որուն գոյնը չկրցին ըմբռնել առաջին առիթով, ընկերավարականները — ծայրայեղ թէ շափաւոր — անցեալ շաբթու մէջ չորս անգամ և քաղաքին չորս գլխաւոր վայրերուն մէջ հակայ միթիւններ գումարեցին, ուր պաշտպանելէ վերջ իրենց տեսալէսները կեանքի սղութեան կամ ուրիշ փոքրով անտեսական տաղանայի պատճառներու մտայն, քննադատեցին Ֆրանսայի արտաքին կայսերական քաղաքականութիւնը, մասնաւորաբար անոր տեսլանքները Սուրբոյ և Կիլիկիոյ վրայ տիրապետութիւն հաստատելու, և իբր միակ անխուսափելի դարման այս բոլորին, ներկայացուցին Յեղափոխութիւնը... Ոչնչոյնք զրկեցին յեղափոխական Գերմանիոյ և իրենց գերման եղբայրներուն (') Եւ վերջապէս հռչակուած նկատեցին Բրեթեյն-Վերսալի պատագրութեան ժամը։

Նոյնօրինակ ցոյցի տեղի ունեցած են նաև Ֆրանսայի զանազան կողմերը։ Մասնաւորաբար հիւսիսի քաղաքներուն մէջ, ուր ընդհանուր գործադուլները մինչեւ այսօր կը շարունակուին և ուր, բրտականոր համար շրջող ընկերավարական երեսփոխան մը յայտարարած է թէ «Հիմակուան յեղափոխութիւնները թնգանթով և խորընկեցով կ'ըլլան...»։ Մակայն աւելցնենք նաև թէ նոյն երեսփոխանը և ձախի իր բոլոր ընկերները հերքեցին պաշտօնապէս, խորհրդարանին մէջ, օրէնքի տակ ինկող բոլոր իրենց հրապարակային գրգռիչ յայտարարութիւնները, երբ այդ մասին հարցապնդում եղաւ իրենց։ Այս առթիւ ներքին գործոց նախարար Մ. Սթեկ յայտարարեց թէ կառավարութիւնը ձեռքերը ծալած հանդիսատես չէր ըլլար և թէ ամեն միջոց խոհակուրէն պատրաստուած էր, պաշտպանելու համար փրանսական սղող աւերիչ հոսանքներու դէմ։ Եւ այս ամենուն իբր հետեւանք, հակառակ անոր, որ ընկերավարականները Մայիս մէկի պատմական օրը վճռած էին նշան տալ ընդհանուր յեղափոխութեան և անպայման գործադուլի, վերջնականապէս որոշեցին գոհանալ սովորական քաղաքացիական գործադուլով տոնել Մայիս մէկը, առանց ուրիշ ունէր զէպի կամ արկածի տեղի տալու։ Մակայն և այնպէս անտեսական հարցը տակաւին պիտի շարունակէ մնալ անլուծելի և իրենց Ընկերային հարցը պիտի տաղանայեցնէ Ֆրանսան, իր այս գժնգակ րոպէներուն։

Խոտնուածքով օժտուած թերթերը և կարողութեանը առջև մարդու մը՝ որ այսքան տարիներէ ի վեր արժանաւորապէս կրցաւ լսելի ընել իր ձայնն ու յարգանքի արժանանալ եւրոպական դիւանագիտական ու քաղաքական բարձր շրջանակներու մէջ։

Երբէք չեմ կրնար ընդունիլ թէ Հ. Հ. կառավարութիւնն համերաշխութեան սիրոյն յանձն առաւ այդ գործունէութիւնն ընել, որովհետեւ գոհողութիւն մըն է չեղածը, այլ ըրաւ այդ որովհետեւ մարդ մը չունէր իր շարքերուն մէջ Պողոս Նուպարի տեղը գնելու։

Եթէ ասոր կիտուն չտի արժէք ունեցող թերթերը, ընկեր մը ունենար, երբէք չպիտի զիջանէր իր շարքերէն զուրաւնորութիւն մը ընելու։ Այս պարտքան պէտք է որ լաւ ըմբռնուի և հասկցուի։

Ինչ որ ալ ըլլայ սակայն, գոհ ենք ոչ թէ անոր համար որ Պողոս Նուպար անուանուեցաւ և յաղթանակ մը տարուեցաւ, այլ անոր համար, որ հայկական գաղտն արժանաւոր ձեռքերու մէջ կ'գտնուի և անշահախնդիր ու օգտակար կերպով պիտի կիրարկուի, յոգուտ այն հարցին, որ աւելորդ է ըսել ամբողջ հայութեան կ'պատկանի։

Այս առթիւ սակայն չեմ կրնար առանց նիշելու անցիտ, թէ վաղը միւս օր բնաւ վարձաւալու չենք, երբ անոր տեղ միջակութիւն մը գնելու համար, եթէ այս ներկայ անուանումը արդէն ինքնին խաղ մը չէ։

Ա Ղ Գ
Օ Ր Ա Ք Ե Ր Ք
990-998 Ուշիկիւն Բ. ԳՈՍԹՈՆ ՄԷ. .

կամ օժանդակութեան մասին Այս մասին, Անգլիա մասնաւորաբար խոստացած է կատարել իր բարեկամ և դաշնակից պետութեան պարտականութիւնները. և այս սովոր հարկ տեսնուած է շեշտել և ամբողջով երկու պետութեանց միջև բարեկամական կապերը և վերանորոգել իրերոգնութեան խոստումները: Իր գործնական քայլ ի միջի տլոց ըստիք ու Անգլիա խոստացած է իր հանձնարարութիւնը արտաձուլութեան հարիւրին 60ը Ֆրանսայի յատկացնել:

ՄՈՒՆԵՂ ՍՐԲԱՋԱՆԻ ՍԳԱՆԱԳԷՍԻ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԱՄՓՈՓՈՒՄԸ

Կարելի է ամբողջական պատմութիւնը ընել 1915ի սկսած մեր ուղկեանքին, որովհետեւ իր տունէն և հայրենիքէն վտարուած ամեն հայ, կին թէ այս, ծեր թէ աղջիկ ունի իր ողբական պատմութիւնը որով քով կը նսեմանայ Տանդէի գոթոսերութիւնը:

Ինչ որ տրուեցաւ մեզ իմանալ գործուած եղանակ մասին, շատ անընշան պարագայ մը կուտայ այն անշուտ սարսափին վրայ, որուն ծանրութեան տակ սպիւնջու հայութիւնը, երբ իր թափառկոտ քայլերը կը սլուտըտցնէր անապատին մէջ, գեղեցիկ մը մը ի խնդիր:

Եղանակ հեղինակները, չուզեցին օգտուիլ պատմութեան դասերէն, և երազեցին ստեղծել Հայաստան մը առանց հայ գաղափարի, իայ արուեստի, հայ կեանքի:

Հոռով, իր անդր բանականները պատնէշեց քրիստոնէական գաղափարին ջրվիժումին դէմ, կրկէաներ կառոյց օղջակիցելու համար մտածումը գինւորները:

Արիւնի այդ գինարբութիւնը հրապարակին վրայ գտնուեցաւ մարդ մը որ իր դահիճներուն գտնուումը քաջութիւնը ունեցաւ ըսելու:

«Ինչ կ'ընէք, գաղափարը կուզէք ջնջել, բայց յուստիաբ պիտի ըլլաք, որովհետեւ մեր երակներէն հոսող մէն մի կաթիլ սերմն է գաղափարի նոր զինուորի մը:

Մեանք քրիստոնէական կոյսը եր, ուժացաւ Հոռովի թանկարարութիւնը, բայց քրիստոնէական գաղափարը կայ ու կը մնայ միշտ:

Եթէ գահիճները օրինակուած ըլլալին պատմութեանէն, իրենց ճակատին համար խնայած պիտի ըլլային ամենէն ապերազան վայրագութեանց խարանը»:

Սրբազան բանաստեղծը, անդրադառնալով հայ ցեղը յատկանշող յուսալի մութեան ոգիին վրայ, աւելցուց.

«Որքեր և այրիներ հաւաքելու համար անապատը կը շրջէ, շորս սե տարիներ վրկանքը ապրած հայ մայրեր ու քոյրեր, իրենց սիրելիներուն կմախքն ու գանկը գրկած, կը մտնային իրենց անապատ կարիք երև և բան մը միայն կը լսուէին մե՛նէ, հա՛ց և քերական իրենց կորիւններուն համար»:

Եթէ անկեղծ ենք մեր յարգանքի արտայայտութիւններուն մէջ, ըստ ընդ առաջ երթանք ցեղին այս պահանջին: Հարկ է որ այսօր դարձնէ վաղուան առաքինութիւնները, վաղուան գործն ու գիտակից ոյժերը:

Պէտք է գիտնալ որ ամեն սերունդ իր կեանքը չապրիր, այլ այն կեանքը՝ զոր իր նախորդներ կը ներշնչէին իրեն:

Եթէ անկեղծ են մեր այսօրուան յարգանքները, ձգտի՛ք սերունդէ սերունդ ապրեցնել ու արդիւնաւորել նահատակուած մտքի հսկաներու իտէայնները:

Կ'ապաստանք եղկելի կորուստը

մեր ամենէն կարկուտէն միաբերուն, ամենէն ցայտուն reliefը կրող գեղեցիկութիւնը գէ՛մ առ գէ՛մ կը գտնուինք միջակութիւններու, որոնց վրայ կը ծանրանայ մեծերու սկսած գործը շարունակելու և լրացնելու պարտականութիւնը:

Իրաւ է թէ ցեղի մը իսկական ներկայացուցիչներն են իր ծոցին մէջ ունեցած արուեստի, վաճառականութեան գաղափարի և գիւնապէտներու հսկայ գործաւորները:

Բայց կըր շանթահար հրկիզուած են մեծ ծառերը, փոքր թուփերը կը փնտռենք անոնց հովանիին տակ հանգչեցնելու մեր յոգնած գլուխը:

Պահն է որ օգտագործենք միջակութիւնները, և ջանքերու, նպատակներու գոհողութեանց համադրութեամբ մը անձեցեմ կերտենք ազատ

տութեան և փրկութեան գործաւորները:

Որքերու սերունդ մը ունի՛ք, արիւնի մէջ մկրտուած, յոյս ունենանք անոնց վրայ՝ Վաղուան հանձնարները կը սլուտն անոնց մատաղ հոգիներուն խորէն:

Կըսուի թէ հրաբուխներու ստորտը մշտնջուր աղբիւններու ողկոյզները շատ աւելի յուսալի կըլլան և հիւսիզքուն սովորական այգիինը:

Քաղաքային հրաբուխներու լուսներու տակ ապրած հայութիւնը այսօր իր ծոցին մէջ ունի սրբերու բանակ մը: Կրնանք վստահ ըլլալ թէ անոնք աղբային այգիստանին լուսագոյն ուղեղները, տղնուագոյն արտերը, ամէնէն կուտ և բեղմնաւոր ողկոյզները պիտի գտնան, բուսական է որ ազգը գիտնայ մշակել անոնց մէջ թագնուած բացառիկ կարողութիւնները:

Անապետագող յօլուած մը վաղը՝ ԱՆՆՁՐՊԵՏՅՈՒ ՄՈՒՆԵՂ ՍՐԲԱՋԱՆԻ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՍԳԱՆԱՆԴԵՍԸ

Հայ մտաւորականներու ողջակիցութեան ճիշդ տարիկցը տնտեսացու կերակրի օր Մինէմա Բանթէնի մէջ, յոգնախուռն բազմութեան մը ներկայութեան Սգանանդէսը կազմակերպած էր «Ձորթօճ» 1. Միութիւնը պատուակալ կարգադէր յանձնախմբի մը հովանաւորութեամբ:

Առտուն Ս. Ստեփանոսի մէջ հագեանգտեսն արարողութիւն մը կատարուեցաւ:

Տեղապահը ներկայ էր հաւաքոյթին, նախապէս օրդէն որոշած ըլլալով մեկնիլ Մէնէմէնի ուխտագնացութեան:

Սգանանդէսին բացումը կատարեց Պ. Պ. Սգանան և բաւական երկար և յուզուած ճառով մը ոգեկոչումն լրաւ մեր մտաւորականներուն որոնք անդորձ մեկնած էին դէպի գողգոթա, իրենց ետին ձգելով իտէալիներու հըսկայ կոթողը:

Երկրորդ բանաստեղծը յարգեց կենդանի պատկեր մը որ իր մահաբոյր պարզութեանը մէջ խլից շատ արցունքներ ներկաներէն: Սրահին խոր լուսութեան մէջ ուր հաղիւ կը լուսէր խեղդուած հատաններու ծայրը, գաշնակը նուազեց մահուան քայլերը, խորհրդուտը և քստմնեցնող տեսարանին տոջև: Ամբողջ գլխաբաց կատարեց իր անմահ մեծեաններու մահուան արարողութիւնը սրտով ընկերանալով անոնց անդապող ու անգերեզման թաղումին: Հայ սեւապզեստ օրիորդ մը, ծողկեպունջ կը բերէր շահերու երկններանդ լուսերով օժուած սուգի շիրիմին: Սուգի այդ արձանը շատեր լացուց կիրակի առտու Մինէմա Բանթէնի մէջ:

Յետոյ, Պ. Թովմաս Պոյաճեան կորովի շեշտեցով պատկերացուց օրուան հանդիսատարութիւնը հետեւեալ կերպով:

1915 Ապրիլ 11 թուականը, ըսաւ, հայկական եղեռնագատուածի ստուար հատրին ամենէն մտայն ու սրտաճմրկ էջը պիտի կազմէ, անոր համար որ հոն քանակէն աւելի հայութեան որակն է որ մահացաւ վայրագորէն:

Մանկագրուեցաւ մեր մտաւորական ընտրանին, անոր համար որ գեղեցկութեան, ճշմարտութեան և արդարութեան պաշտամուտը ունէր իր հօգուտն մէջ:

Թշնամին իր ապրիլ 11-ի գուռով նպատակ մը միայն կը հետապնդէր: հարուածել հայ միտքը, գլխատել հայութիւնը, անկուլու, անհսկել անպաշտպան հօտի մը վերածել զայն, որու վրայ գրոհ պիտի տային արիւնկզակ զայնը: յագուրդ տալու իրենց ճիւղաղային ախորժակին:

Անարդ թշնամին կը ձգտէր մեր ցեղին մէջ սպաննել ազատագրութեան և ինքնապաշտպանութեան այն ոգին, որ այնքան խանդավառօրէն կը համապարտէր մեր եղկելի մտաւորականութեան կողմէ:

Սպաննել գաղափարը, ինչ յիմարական երազ:

Անկասկածեան և անձնապաշտպանութեան ոգին, զոր մարած, խեղճած ըլլալ կը կարծէին 20—30 ազնիւ հոգիներու մէջ՝ այսօր հրեհած է ամբողջ ցեղը:

Պ. Թ. Պոյաճեանէ յետոյ բեմ բարձրացաւ Գեր. Տ. Մուշեղ Արքայս. որու բանաստեղծութեան ամփոփումն կուտանք վերև:

Չորրորդ բանաստեղծը էր Պ. Ս. Պարթևեան, որ խօսեցաւ ի դիմաց Հ. Յ. Դաշնակցութեան Պ. բանաստեղծի մէջ այլոց վարձկան գրականութեան մը դէմ տուած իր հարուածներուն մէջ մտազրուութիւնն ունեցաւ ինքնահենապարական նոթեր տալու մեղ:

Երկրորդ կենդանի պատկերը «Քամբ Որոտան»ի գոտ շեշտեցաւ ընկերակցութեամբ, պանծացուց հայ վերածընունդը, և հայկական եռագոյնը հովանիին տակ Հայ Մարի անհրէն կը ծնէր հայ Ֆէնիքսը, աւելի փառայեց:

Մեզի անձնութեան պատճառներով «Քնարը» որ խօսք տուած էր ներկայ գտնուիլ Սգանանդէսին, մեկնած է Մէնէմէնի բանայիրին: Այս քայլը մեծ գծուարութիւն մը տուած է կարգադիր յանձնախմբին, որ հաղիւ ժամանակ ունեցած էր կազմելու երգեցիկ խումբ մը: Այսպէս հապճեպով յուսալ բերուած խումբէ մը անշուշտ կարելի չէր ստատել ներկայիս գործ մը:

Սգանանդէսին գլխաւոր կազմակերպիչը եղած է Պ. Նշան Վարդանեան: Չարթօճի այս ժրաջան անգամ մը յոգնիլ չգիտեր և որու թափած ջանքերը, ամէն առթիւ, արժանի են գնահատութեան և գովեստի:

Ազգային Անցուկարձ

Թիւրքա լսած ըլլալու է իզմիրի Հայ հասարակութիւնն որ բժշկուէի Օր. Աննա Տէփանեան դարմանատուն մը բացած է Քօթարիւղ Ապահովող փողոց թիւ 28, Տօք. Արաստօլտի հետ Օր. Տէփանեան ի յիշատակ իր հօր այդ դարմանատան մէջ անկողին մը տրամարած է Բաբերդի Լուսնոկ գիւղի անուամբ, լուսակցներով զայն իզմիրի Հայ Կտարի Խաչի կողմէ ՂԸՐ-կուելիք հիւանդներու Օր. Տէփանեանի և Տօք. Արաստօլտի դարմանատունն կ'յաճախէ նաև Տօք. Վարդա որու ցոյց տուած անձնուիրութիւնն ամէն գնահատութեան վեր կ'մնայ: Բացի դարմանատան կողմէ խնամուած հիւանդներէ տեղւոյն շրջակայ

գիւղացուցեան մեծ օգուակարութիւն մը կուսենայ բժշկուէի Օր. Տէփանեան, որ առանց խորութեան տրամադրած է իւր աշակցութիւնն, բարոյապէս և գիտականօրէն խնամելով աղքատ հիւանդները:

Անշուշտ Հ. Կ. Ոսալը պիտի ուզէ օգտուիլ իր տրամադրութեան տակ դրուած անկողին և գոհութիւն պատճառի դարմանատան հիմնադիրներուն: Օր. Տէփանեան անձնութեան մը չէ իզմիրցուց համար: Բազմաթիւ տարիներու մէջ իր ստացած փորձառութիւնն և իր անձնագոհ նուիրութեան վերջը իր կիրարկած արհեստին մէջ, արդէն զօրուտ գրուականներ են իր կարողութեան և իր հաստատած գործին: Իսկ Տօք. Արաստօլտի և Տօքթ. Վարդաի շնորհակուութեան մեծ բաժին մը ունինք սալիք: որովհետեւ գործին յաջողութեան և հիւանդներու խնամքին մէջ իրենց դրած անձնուիրութիւնն բացալատ և խօստան ապացոյցներ եղած են:

— Յառաջիկայ Հինգշաբթի Պ. Բարսեանի կողմէ արուելիք երգաճանդէսը դարձեալ յետաձգել հարկ եղած է միւս Հինգշաբթի Յ Մայիս և այդ երգաճանդէսին լուր հասոյթը պիտի յատկանայ Գինկա Տօթրի տեղւոյն ընկերութեան: Երգաճանդէսի հովանաւորութիւնն ստանձնած է ամերիկեան ընդհանուր հիւպատոս Մր. Հօրթըն:

ՄԱՆՁՍԹԻ ԿՐԱՊԱՐԱԿ

Մարտի 10 Ապրիլ 1920

Այսօր հրապարակը չափազանց կայուն է, թէև քանի մը տեղերէ բազմաթիւ պահանջներ կան, սակայն իսկապէս գործին քանակը արտագրութեան շատ քիչ է: Ոմանք ասոր պատճառը կը նկատեն զանոնք որ տընութիւնը կը շինեն, որոնց պահանջքը այնքան քիչ եղած էր վերջերս որ մանարանները ստիպուեցան ուրիշ ապրանքներ արտադրել, վերի վայր շէր-շիլով արտադրութեան հաւասարակընուութիւնը:

Այսպէս, կը կարծուի թէ եթէ գործերու այս վերածնունդը իրականանայ, առուստուրի ուրիշ ճիւղեր կը բնանան շատ օգտուելի կտաններու գիները հաստատ են և վաճառականները կերելին յուսալ լուսագոյն բաներ:

Այսօր միայն քանի մը ճերմակեղէններու վրայ կը խօսուի: Չիմաստանի համար կալիթա, Պօլպէյ, Քարաշի և Ալէլան տպածոյ կը պահանջեն իթէ գինը և ժամանակը կարելի ըլլայ կարգադրել Ոսկուաթիւ վրայցներու պատուուեցան կալիթայի համար և քանի մը բէնի բարձրութեամբ տընութիւններու վրայ ալ գործ կայ որը կը յուսուցուի թէ քանի մը օր վերջ կարելի պիտի ըլլայ արձանագրել, մանաւանդ որ Պոլպէյի վաճառականները արդէն գնումներ ըրած են: Կերպատի ապարանքներ եղած են Եգիպտոսի համար և Անգլիոյ աստուրի պահանջները կը շարունակուին Ամերիկեան դերձանները փոքրիկ փոփոխութիւն մը կը ցուցնեն: Եգիպտական կանները անփոփոխ են և պահանջքի տեսակէտով գանդադ:

Լիվրբուրի վաճառքներն 3000 հակ 15էն 19 կէտի բարձրութեամբ Ամերիկեան և Պարսիկեանները 10 կէտի իջած են: Եգիպտական վաճառքներն են 200 հակ:

Արժութիւնը 27/8 բէնի անկուտ մը ունեցած է:

ՄԵՆՆՈՒՄ

Քաղաքէս մեկնեցաւ դէպի Մանչեսթըր Պ. Մարգար Աղնաւորեան նախընթաց օր Բիրէթի ճամբով:

ՆՇԱՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Կիրակի օր տեղի ունեցաւ Պ. Պեա-
րոս Մամուրեանի նշանախօսութիւնն
Օր. Վերթթօրեա Մէթէրիսեանի հետ,
Պ. Սեդրաք Կիրակեանի բնակարանն,

ՆՈՒՒՍԻԱ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Պ. Պ. Ս. Պոյաճեան, Ժ. Բարսի-
նատիս՝ 300 տկան զրուշ:
Պ. Ս. Յովակիմեան՝ 250 զրուշ:
Պ. Պ. Պարսեան՝ 200 զրուշ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԱԿՅՈՒԹԻՒՆ

Սան Բէմօի Համաժողովին մէջ, Պոզոս Նուպար երկարօրէն պարզած է
Հայաստանի երկրական վիճակը բարեւոքելու համար մեծ պետութեանց աջակ-
ցութեան անհրաժեշտութիւնը, և իր այս ջանքերուն մէջ յաջողած ապահովել
անոնց աջակցութիւնը:

ՏՐՈՒԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Սան Բէմօի Համաժողովը կարգ մը սեղեկութեանց համաձայն, հետեւեալ
որոշումները տուած է:
1. Սուլթանը Պոլիս պիտի պահուի, Մեծ պետութեանց և մանաւանդ Անգ
լիոյ հակակշիւր տակ: Բաղաճական, անտեսական և վարչական հակակշիւր մը
պիտի գործադրուի:
2. Նեղուցները պիտի գրաւուին:

ՌՈՒՍԻԱ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

«Տէյլի թուէկրաֆ» կը գրէ, որ Համաձայնականները պիտի աշխատին գո-
հացում տալու նախագահ Ուելլընի որ կը փոփոքի Ռուսիոյ հաւանական ի-
րաւունքները երաշխաւորել Նեղուցներու կարգադրութեան մէջ:

ՖՈՇԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Մարաշտիստ ֆոշ տեղեկագիր մը յանձնած է Սան Բէմօի Համաժողովին,
այդ տեղեկագրով Մարաշտիստը չպահանջեր ունէլ զինուորական նոր առաքում
գէպի մօտաւոր տրեւելք և բաւարար կ'համարի հոն գտնուող համաձայնական
ուժերը, սրպէսզի թուրքիոյ պարտադրին զաշնագրին գործադրութիւնը: Մի-
այն Հայաստանի մարքոնգործումին և անոր սահմաններուն պաշտպանութեան
համար, թրքական որևէ հարուստ յարձակման դէմ, հարկ կ'տեսնէ յետաձը-
գում մը՝ թրքական զաշնագրին գործադրութենէն վերջ հարկ եղածն ընձուլ
համար:

Թէ Մարաշտիստ ֆոշ և թէ Սան Բէմօի մէջ գտնուող Համաձայնական զին-
ւորական առաքելութիւնները կ'պնդեն որ 19 հելլենական և զաշնակից զօ-
րաբաժինները Թրակիոյ և Փոքր-Ասիոյ մէջ կատարելապէս կարող են գործա-
դրելու վիճակողովին որոշումները թէ՛ Եւրոպական և թէ՛ ասիական թուրքիոյ
մէջ: Այս գործողութիւններէն զերծ կ'մնայ միայն էրզրումի շրջանակը որ ըստ
Մարաշ, ֆոշի կրնայ գրաւուիլ աւելի վերջ:

ԹՐԿԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ

Հնչակաւորն Կտիլիպ Բէմալի պէյ, որ Հոռոմի մէջ պաշտօնապէս կը ներկա-
յացնէր թուրք կառավարութիւնն, խոսակցութեամբ խոստարարած է որ
թուրքիա երբեք չպիտի խոնարհի Իզմիրի և Էստրինէի կորուստներուն առջև:
Նոյնպէս թուրքիա Հայաստանի չկրնար տալ հողամասեր, ուր 15000 հա-
յու դէմ կը գտնուին 4 միլիոն իսլամներ:

Եթէ Եւրոպայ թուրքիոյ պարտադրէր ընդունիլ այսպիսի զաշնագիր մը, իր
դէմ պիտի գտնէր Ասիոյ, Եգիպտոսի և Թրակիոյ բոլոր իսլամ ուժերը:

ՍԱՆ ԲԷՄՕԻ ՀՅՄԱԺՈՂՈՎԸ

«Մամթէն» թղթակիցը կ'գրէ մեզ թէ Հայտ Յորճ և Նիթի չպիտի յամա-
ռին իրենց տեսակէանքներուն մէջ գերմանական խնդրոյն մէջ:

Ն Ե Ղ Ո Ւ Ց Ն Ե Ր Ը

«Նիւ-Եօրք-Էրրլտ» կը կարծէ գիտնալ թէ, թրքական հորցին մէջ կարեւ-
ւոր իրողութիւն մը յառաջ եկած է, որով թրքական զաշնագրին պիտի կցուի
Յրանքօ-տնդիլական համաձայնագիր մը: Այդ համաձայնութեան գորութեամբ
Նեղուցները պիտի յանձնուին բրիտանական Նուստորմիդիոյ և Կէլիպոլու պի-
տի գրաւուի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՀԱՆՁՈՒՄՆԵՐ

Սան Բէմօի Համաժողովին մէջ լսուած է Հայկական պատուիրակութեան
պետ Պոզոս Նուպար որ իրանալի կերպով ներկայացուցած է Հայկական խըն-
դիրը:

ԻՏԱԼԻԱ Ի ՓՈՒՔՐ-ՍԻԱ

«Թրիպուլեա» կ'գրէ թէ Իտալիա՝ Փոքր-Ասիոյ մէջ հողային կցումներ ընել
չպիտի արդար, այլ որոշ գօտիի մը վրայ կ'փոփոքի ունենալ անասական ազգե-
ցութիւն մը:

ՄՈՒՍՐՈՒՅԱՒ ՔԷՄԱԼԻ ԴԷՄ

Տամատ Ֆէրիս փաշայի կառավարութիւնն յաջողած է 4 վաշտ կամաւոր
զօրքեր համախմբել քաղաք համար Մուսթաֆա Բէմալի դէմ: Իսկ Անգլոմուր
Պիդա կ'գտնուի և չէ եկած Պոլիս:

ԶԷՋՈՒԲ ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏՆԵՐ

Ինչ ինչ սեղեկութեանց վրայ յենլով կ'կարծուի թէ Իզմիրի նաւահան-
գիստն և կարգ մը ուրիշ թրքական նաւահանգիստներ, ինչպէս Տրապիզոն,
Տէտէ Աղաճ, Ծափա, Ալեքսանդրէտ նաև Պաթում չէզոք նաւահանգիստներ
պիտի հռչակուին:

Ս Խ Ա Լ Ն Ե Ր

Պ. Միլանն որ իր ետև ունի Փրանսական հանրային կարծիքին խիտ զան-
գումը, որ կը պահանջէ անկախ և ապրիցնող թուրքիոյ մը պահպանումը:
«Թան» խօսքերը են տասնք. Միշտ գիւրին է Փրանսական կարծիքին
վերագրել կամեցողութիւններ, զորս ան երբեք չէ արտայայտած: Բայց կը մը.
նայ սա կէտը թէ ատիկա պատուաւոր ձեռնարկ մըն է: Մինք իրաւունք ու-
նինք բողոքելու, հանրային կարծիքին մէջ մտախն անուշով, որ միւսին չափ
Փրանսական է, և կրկնել թէ թուրքիան խնայելու քաղաքականութիւն — Ալ-
լահի հպատակներուն տեսնելի չըլլալու համար — անհիթեթ քաղաքականու-
թիւն մըն է:

Այդ քաղաքականութիւնն մեզ պիտի անաշնորդէ յոռեցոյն գառնութեանց
և Արեւելքի մէջ Փրանսական շահերու փնտցումին համար լուազոյն միջոցն
պիտի ըլլար, հետեւի «Թան» խորհուրդներուն Շատ ուշ պիտի հասկնան թէ
ո՞վ իրաւացի և ո՞վ անիրաւ է:

Եւ որովհետև նախարարներուն խորհուրդ տալ յաւակնող Փրանսական
մեծ թերթը այդ կարծիքին մէջ հեղինակաւոր կ'զգայ ինքզինքն, մեք անոնց
պիտի ըսենք մեր ձայնին բոլոր ուժովը. «Զմեաց այլևս սխալ զոր չզործէիք
Արեւելքի մէջ

Տեղական Լուրեր

ՆԱԽԻՆ «Լիպէրթէ» խմբագիր
Պ. Լէօնար Բասնթաքի որ բաւական
ժամանակէ ի վեր մեկուսանալ ստիպ-
ուած էր հրապարակաբար թէնէ, ու
բախտութեամբ կ'տեսնենք թէ ապա-
քինելով վերականգն է իր աշխատու-
թիւններն «Լա Բէֆօրմ» և «Լ'էնտէ-
բանտան» մէջ: Այս առթիւ մեր ու-
բախտութիւնն հրապարակու կ'յայտ-
ենք ծանօթ հայասէր մեր պաշտօ-
նակցին:

ՏԵՂԱԿԱՆ Թուրք Մամուլին ամէ-
նէն յարգուած և լուրջ գէմքերէն մին
Ալի Նազմի, «Անէնկո» տէր և սնօ-
րէնը մեռած է առջի օր:
Յիշեալը, բաւական լայնագոյն իմաս-
տով պատուաւոր հրապարակագիր մը
եղած է: Իր երկար ապագայէն մէջ
չէ արձանագրուած ունէ շնորհ, որ
արտա մը բերէր իր ճակատին:

Նազմի պէյ շատ անդամներ քա-
ղաքիս թաղապետական խորհրդին ան-
գամ ընտրուած է: Ինք նոյնպէս ան-
գամ ըլլալով Իտալիի ժողովին, յա-
ճախ ապացոյցները տուած է թէ հայ-
րենիքի իրական շահով հետաքրքր-
ուող թուրք մը եղած է ինք: Ուղիղ
նկարագիրը ամէն տեղ և ամէն պս-
րագայի մէջ կը յարգուի:

Թաղումը կատարուած է Կիրակի
օր տեղական օրագրողներու և խումբ
բազմութեան թափօրով: Հելլէն Մամ-
ուլի գիւղանի պետ Պ. Բոտա և ուրիշ
ներկայացուցիչներ գտնուած են թա-
փօրին մէջ:

ՇԱՔԱՐԻ գինը կրկին բարձրացում
մը ունեցած է: Օրսան կը ծախուի 85
զրշ: Ի Անցեալ շաբթուան ընթացքին
բաւական խոշոր շաքարի մթերք մը
հասաւ մեր հրապարակին համար: Եւ
փոխանակ գինը իջնելու կը բարձրա-
նայ:

Հ Ր Ա Պ Ա Ր Ա Կ

Table with 2 columns: Item name and value. Includes items like Գ. — քէքեր, Լօնտօն, Նիւ-Եօրք, Բարիզ, Լոռն, Աթէնք, Պերլին, Զուրիցերիա, ուրօնք, Թղթագրամ, Անգլ. ոսկի, Տօլար, Ֆրանք, Լիր, Իտալ., Տրապիզ, Բուրօն, Ոսկի, Մարք.

Այրի Տիկին Մարիամ Օհանեան և
որդիք իրենց խորին շնորհակալու-
թիւնները կը յայտնեն ամեն անոնց,
որոնք հաճեցան անձամբ կամ զբա-
ւոր իրենց ցաւակցութիւնները յայտ-
նել ՎԱՀԷ ՕՂԱՆՆԱՆԻ տխուր մահ-
ուան առթիւ:

ՆՈՒՒՍԻԱ ՈՒ ԹՈՒՐԿԻԱ

Ա. Կ. Ո. — Պ. Վահէ Օհանեանի
մահուան առթիւ կ'ընտրին. Այրի Տի-
կին Աննա Ղ. Պալապանեան 5. 0. Պ.
Յակոբ Պոսթանճեան 5. 0., Պ. Գրիգոր
Պ. Տիպէր 3. 00 կի, Պ. Սարգիս Սի-
րուսեան 2. 00 կէս 0., Պ. և Տ. Սարգիս
Գուլումճեան 3. 00 (Գ. Խ.):

Վ Ե Ր Զ Ի Ն Ժ Ա Մ

ԱԶԳ. ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԶՈՒԼՈՒԱԾ

«Ճակատամատ» կը գրէ. — Սառայ տղերքէ կ'իմանանք թէ Եւրոպայի մէջ
զորքող երկու պատուիրակութիւնները ձուլուած են արդէն և Պ. Պոզոս Նու-
պար Հանրապետութեան կառավարութենէն ստացած է իւր պաշտօնագիրը, իր-
բև պետ պատուիրակութեան, համաձայն Երևանի մէջ մշակուած բանակցու-
թեանց: Պ. Ահարոնեան այլ կը մնայ իր պաշտօնին մէջ, իրբև անդամ ամբող-
ջական Հայաստանի պատուիրակութեան:

Մեծ Յունաստանի Պարգեւաւոր Փոխառութեան արձանագրութեամբ ձեռք դրամը կրկնապատկուած կ'ըլլայ. որովհետեւ 30 սարուան ժամանակահիշոցի մը մէջ

300 արախովինոյ պարտաթուղթը ձեռք կը բերէ

Դրամագրութիւն	200	արախովին
Տոկոս	300	»
Նուէր	100	»

Ընդհանուր գումար 600 արախովին

Բայց ձեռք պարտաւորողով կը մասնակցիք նաեւ փոխառութեան պարգեւին որուն առաջին պարգեւն է

ՄԵԿ ՄԻԼԻՈՆ ՏՐԵԽՄԻ

ՕԹՕՄՕՊԻԼ ՖԻԱԹ

ԵՒ ՈՊԱԻ ԱՄԵՆԷ ԿԱՐԵՒՈՐ ԳՈՐԾԱՐԱՆԸ

- Ֆիւթի ԳՈՐԾԱՆՈՑՆԵՐԸ կ'ըրան 1,300,000 քառ. մէթր տարածութիւն մը:
- Ֆիւթի ԳՈՐԾԱՆՈՑՆԵՐԸ կը գործածեն 50,000 գործուոր:
- Ֆիւթի ԳՈՐԾԱՆՈՑՆԵՐԸ Համաձայնական քանակներու յանձնած են 60,000 կառք եւ 15,000 մօթէօր:
- Ֆիւթի ԳՈՐԾԱՆՈՑՆԵՐԸ չեն վախճար որ և է մրցումէ որովհետեւ իր օժտակիրներն բոլորովին կը պատրաստուին իր գործարաններուն էջ ինչպէս նաև իր կառքի կազմածները:
- Ֆիւթի ԳՈՐԾԱՆՈՑՆԵՐԸ կ'իննն պերճանքի օժտակիրներ ամեն ուժով և ամեն տրամաբան Գումար, Մօթէօր և Քանօթ, Մօթէօրներ ամեն գործի համար, Երկրագործական սայլեր և մեքենաներ են: Եւն:

ՅԵՄԱՅԻ ԱՆԸ ԿԱՆԳՐՈՒԱՆ (կարած) ԲԱՐԱՆԷԼ ՓՈՂՈՑ ԹԻԻ 262 (Քլէմէնտէն Դէմոյ)

Նորածու գործատեղիով նորոգութեանց, ներկի եւն.

ԱՄԲՈՂԶ ԳԻՇԵՐԸ ԲԱՑ

Հարգանքներով Բաժնորդներուն ինչպէս. — Մեծ յիշեր քննադատներու և Դաստիարակներուն շնորհակալութիւնով ինչպէս: Գործարարներուն:

ՕՅՕՏՕՊԻԼԵՐՈՒ ԸՆԿԵ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՖԻԱԹԻ ԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՖԻԱԹԻԼԻ ԶԱՆԱՐՏԻ ԼԱՆՏԻ

Արտածում, ներածում, արտադրում, մաքսային գործողութիւններ, բեռնաւարում, պարպում, շաքենաւաճիկն ամեն նոսախ գործարան. Թիւններ, Դիմել Գօլիս Դաւաթիս, քարափր, Ծալերօ բասած թիւ 2 ԱՐՍԻԱՆԵԱՆ ՅԱԿՈՐԵԱՆ շաքենաւաճիկն գործակալութեան:

ՓՈՂՈՎՈՒՐԴԻ ԶԱՅՆԸ

Օր-Բերթ Կարտիս և Կարտիս-Կարտիս Խմբագրութեան ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅԱԿՈՐԵԱՆ Տարեկան բաժնեկիւն 700 դրշ.

ՃՕԼԻ. ԱԼԷՎԼՐԱ. ԸՆԿ. ԼՄԹՏ.

ՆԱԽԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Կարգաւարտ ԵՒ ՀԱՅՐԱՍԵՐԵՐ - ԱՍՈՒՄԻ ՎԱՅԱՍՏԱՅԱՆԻ Կանոնաւոր երթուիկ Լոնտօնի եւ Լիվրպոլի եւ Մեծն Բրիտանիոյ քաղաքներու միջև: Նախապէս ամեն ժամանակահիշոց օպտատարութիւն Նիւ-Եորքի համար:

Գործակալի «Բաշարիկ» ապահովագրական հրդեհի ընկերութեան շնորհիւ:

Ճիարք Ժ. Տ. ԱԼԷՎԼՐԱ ԵՒ ՈՐԴԻԲ ՆԱԽԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԻՐԷԱ-ՅՈՒՆԱՍՏԱՆ

ԳՐԱՐԱՆՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԵՐԸ

ՊԱՍՏԱՆԻՆԷՆԷՆ ԳՆԱՄԻԼ ՓԱՇՄԱ ԽԱՆ

Միջին և հիմա գիտնորներու գիտնաւորներու արժանաւորութեան ամեն կենդանի պահովներ անպատճառ գիտելու են:

Մասնագիտներու կողմէ գիտական վերջին միջոցներով կը գարնանուին ամեն տեսակ կենդանիներու անոթները, նկատուած հիւանդութիւնները, արտաքին և ներքին գոնազան արտաքին, ինչպէս կազմութիւն, և վիրաբուժական գործողութիւններ կը կատարուին Տուրքիոյ ատոլոգիայանէ թեան հետ կապ ունեցող շտաբներու հիւանդութիւնները մասնաւոր խնամքով կը բուժուին:

Անաստարտք Լ. ԳԻՐԱՅԻԼԵՆ ԵՒ ԸՆԿ.

ՀԱՅ ԶԱՅՆ ՏԵՐ և ՏՅՈՐԷՆ. — Մ. ԿԵԿԵԼԵԱՆ Քաճեկի տարեկան 800 Հասցէ փոստարկ 62 Ատանա

ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Կրակի դէմ. — NATIONAL UNION SOCIETY LTD. LONDON

CENTRAL INSURANCE CO. LTD. LONDON

Ծովային. — PHOENIX ASSURANCE COMPANY LTD. LIVERPOOL

Դիմել նախաձեռնութեանց համար. ԸՆԿԵԶԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐ Լ.ԵՒ Լ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

Սպասեցե՛ք քանի մը օր աչ, որպէսզի ձեռք յազիրները, գրիտը եւ դպրոցական առարկաները կարենա՛ք գնել «ԶԱՐՓՕՆԻ», ՀԱՅՍՏԱՆԻ ԳՐԱՏՈՒՆԷՆ ըր միակ հայ գրատունն է Իզմիրի մէջ:

ՅԻՇԱՍԿՆԵՐ

Բացատրեցի իրենց այն վտանգները որոնց պիտի ենթարկուէր Եւրոպայի խաղաղութիւնը, եթէ քաջալիրուէր Աւստրիա որուն ռազմասէր տրամադրութիւնները ծանօթ էին ինծի, և թախանձանօք խնդրեցի իրենցմէ, ի սէր խաղաղութեան, ազգարարութիւններ ընել Աւստրիոյ բայցայդ ազգարարութիւններն ընել խիստ լիզուով մը, որովհետեւ Վիեննա և Պուտսքէշթ մեղմ լեզուէ չեն հասկնար Աւստրիացի թէ ես վրաս կառնէի բովանդակ պատասխանատուութիւնը պայքարի մը՝ զոր օգտակար կը կարծէի ո՛չ միայն խաղաղութեան՝ այլ նոյնիսկ Հապսուրկներու տարաբաղդ միտպետութեան համար:

Հետեւեալ օրը, Քաջալ և Մօրէիկ Բօնի խիստ կորովի խմբագրականներ կը հրատարակէին, խմբագրականներ որոնք մատնանի կընէին Աւստրիական դաւադրութիւնը և Հապսուրկներուն կուտային այնպիսի ազգարարութիւններ որոնք պէտք էին քանից կասեցնել ազգատար վաւերային վերայ՝ եթէ Թիցա-Յօրկա-Պէրլսթօլտ եւ

Կուզեմ անձնական երկու իրողութիւններ հաղորդել Ատոնցմէ առաջինը տեղի ունեցած է 1913ին:

Այդ թուականին Լոնտոն կը բնակէի, ուր բրիտանական կայսրութեան արտ. գործոց նախարարին և անկլիական մտածումի ուրիշ հեղինակաւոր ներկայացուցիչներու հետ ունեցած խօսակցութիւններէս՝ այն խորունկ համոզումը գոյացուցի թէ Անկլիա ջերմօրէն կը բաղձար խաղաղութեան, և թէ՛ այս պատճառով՝ իր յարաբերութիւնները Գերմանիոյ հետ—որ այս միջոցին օգտակար գործ մը կընէր՝ բերանակապ մը գնելով իր զինակցին Աւստրո Հունգարիոյ ռազմասէր հակակներուն— խիստ սերտ ու սիրալիր հանգամանք մը առած էին:

Ուստի, 1913 յունվար 7ին, համարձակեցայ գրել Ն. Վ. հանգուցեալ կարօլ թագաւորին թէ, քանի որ Անկլիա և Գերմանիա հաստատապէս որոշած էին արգիլել եւրոպական պատերազմը, ապահով էի որ այդ պատերազմը, չպիտի պայթէր:

Բայց, ստիկա հին պատմութիւնէ, պիտի ըստի:

Հա՛ւ ուրեմն, անցեալ յունվար 21ին երկուշաբթի օր, Աւստրիական վերջնագրին Սերպիոյ յանձնուածն երկու օր առաջ, պատիւ ունեցայ բրիտանական կայսրութեան արտ. գործոց

Սըր Էտվար Կրէյի կողմէ երկար ունկնդրութեան մը ընդունուելու:

Կուզէի համոզել զինք որ օգնութեան հասնի ալպանական վիճակները անել կացութեան մը հասած էր, զըլխաւորապէս կը ջանայի համոզել անկլիոցի նախարարը թէ՛ անհրաժեշտ էր միջազգային զօրազուեղեր զրկել Ալպանիա և քիչ մը աւելի զրամ գննել իշխան Կրյոյով վիտի արտագրութեան տակ:

Ճոյ կուտայի Սըր Էտվար Կրէյի՝ ալպանական դժուարութեանց եւրօպական հանգամանքը, դժուարութիւններ որոնք կապտանային կրկին Աւստրո-Հունգարիան, մղել այն սուր ջրազրգուցեան վիճակին որ յատկանիշած էր զայն պայքանեան պատերազմի միջոցին: Բառ առ բառ աւելցուցի. «Գիտեմ թէ մարդեր կան որոնք այնպէս կը կարծեն թէ Ալպանիոյ խօսնակութիւններուն աչք գոցելով՝ կարելի է հոն մը յառաջ բերել Աւստրիոյ և Իտալիոյ միջև, և, հետեւաբար, Իտալիան անշտաւ երեւակ զինակցութիւնէն Ասիկա կարծատես քաղաքականութիւն մը պիտի ըլլար, հետեւաբար վտանգաւոր» համարձակեցայ ըսելու:

(Շարունակելով)